ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

Կանանց և երիտասարդների, կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի, սոցիալական հարցերով ԽՄ

1-ին նիստի

Ք.Չարենցավան, 28.04.2023

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի տեղակալ Սևակ Վարդանյանը:

Նիստին մասնակցում էին ԽՄ անդամներ Սաթենիկ Մեհրաբյանը, Վահագն Մարգարյանը, Գառնիկ Բեգլարյանը, Արթուր Փանոսյանը, համայնքապետարանի աշխատակիցներ Արմինե Զաքարյանը, Սաթենիկ Բալաբեկյանը, Շողակաթ Մելտոնյանը, Լուսինե Սահրադյանը, Ռուզաննա Սարգսյանը, Ադրինե Եփրեմյանը, Վարդուհի Սիմոնյանը:

Նիստի օրակարգում ներառված էին մի քանի հարցեր, որոնք օրակարգում առաջարկել էր «Ապրելու երկիր» խմբակցությունը՝

1. Խաղահրապարակների անվտանգության հարց,
2. Լողավազանի խնդիր,
3. Կանանց վերապատրաստումների, կրթության, մասնագիտական հմտությունների բարելավման հարց:

Օրակարգի առաջին կետով քննարկվեց համայնքի խաղահրապարակների անվտանգությունը: ԽՄ անդամ Սաթենիկ Մեհրաբյանը նշեց, որ խաղահրապարակները վատ վիճակում են գտնվում, կոտրված են, վնասված: Քննարկվեց այն հարցը, թե ինչպես անել, որ բնակիչները չկոտրեն խաղահրապարակներն ու ճոճանակները: Վահագն Մարգարյանը նշեց, որ եթե բնակիչները մասնակցեն կառուցմանը, այլևս չեն քանդի: Համայնքի ղեկավարի տեղակալ Սևակ Վարդանյանը նշեց, որ այս տարի կվերանորոգվեն բոլոր հին խաղահրապարակները, կկառուցվի ևս մեկը միկրոթաղամասում, մանկական ճոճանակներն էլ պարբերաբար վերանորոգվում են:

Օրակարգի հաջորդ կետով քննարկվեց համայնքի տարածքում լողավազանի բացակայության հարցը: Համայնքի ղեկավարի տեղակալ Սևակ Վարդանյանը նշեց, որ կա նախագիծ և այս տարի համայնքի 6-րդ դպրոցի տարածքում գտնվող

լողավազանը հավանաբար կգործարկվի անհատ ձեռներեցների կողմից, աշխատանքներ են տարվելու, որ լողավազան կառուցվի նաև մարզադպրոցի տարածքում: Նախագծի մրցույթ կհայտարարվի, կներկայացվի կառավարության հաստատմանը:

Օրակարգի վերջին հարցով քննարկվեց համայնքի կանանց շարունակական կրթության և մասնագիտական հմտությունների բարելավման հարցը: Սաթենիկ Մեհրաբյանն ու Վարդուհի Սիմոնյանը ցանկացան իմանալ, թե ի՞նչ նմանատիպ ծրագրեր կան համայնքում, քանի որ կանայք շատ են հետաքրքրված: Վահագն Մարգարյանը հարցրեց՝ թե արդյոք կա՞ վիճակագրություն, թե ի՞նչ տարիքի կանայք են հետաքրքրված, ի՞նչ դասընթացներ են ուզում, ի՞նչ են ուզում սովորել, աշխատել: Նշվեց, որ նման վերլուծություն չկա: Համայնքապետարանի մասնագետները նշեցին, որ համայնքում պարբերաբար կազմակերպվում են տարբեր ծրագրեր թե՛ միջազգային, թե՛ տեղական կազմակերպությունների, թե՛ կառավարության աջակցությամբ, բազմաթիվ կանայք են վերապատրաստվել, բիզնես ծրագրեր գրել, աշխատանքային գործիքներ ստացել, նոր հմտություններ ձեռք բերել: Բայց կշարունակեն աշխատել, որ դասընթացներն ավելի շատ լինեն: Համայնքի ղեկավարի տեղակալ Սևակ Վարդանյանը նշեց, որ հավանաբար իրազեկումը քիչ է արվում իրենց կողմից, կաշխատեն բոլոր հարթակներով ավելի լայնամասշտաբ իրազեկում ապահովել:

Արձանագրող՝

Հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ս.Բալաբեկյան